ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 50
08 հունիսի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի դրույթներով,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Աբովյան փողոցի թիվ 35 հասցեում գտնվող Ֆեդյա Վոլոդյայի Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող 1353 քառակուսի մետր մակերեսով կառուցապատված հողամասի ընդլայնման համար, դրան կից՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Աբովյան փողոց թիվ 35/1 հասցեում (08-003-0044-0039 կադաստրային ծածկագրով) բնակավայրերի նպատակային նշանակության 33,47 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական դասակարգման հողամասը և 24,93 քառակուսի մետր արտաքին մակերեսով / երկու հարկ/ շինությունն ուղղակի վաճառքով օտարել Ֆեդյա Վոլոդյայի Հովսեփյանին:
2. Հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 1 /մեկ/ հեկտարը՝ 7920000 (յոթ միլիոն ինը հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ 33,47 քառակուսի մետր մակերեսով հողամասի համար՝ 26508 (քսանվեց հազար հինգ հարյուր ութ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ 24,93 քառակուսի մետր շինության (կադաստրային ծածկագիր 08-003-0044-0039-001) համար՝ 51257 (հիսունմեկ հազար երկու հարյուր հիսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3.Սույն որոշման 1-ին կետով նախատեսված օտարվող հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ ...9	Դեմ՝ ...0	Չեռնպահ՝ ...0
Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ	----------	----------	----------
Ա. ԱՐՍԵՆՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ	----------	----------	----------
Կ. ՀՈՎՍԵՓՅԱՆ	----------	----------	----------
Մ. ՂԱԶԱՐՅԱՆ	----------	----------	----------
Գ. ՂԶՐՈՅԱՆ	----------	----------	----------
Բ.ՄԵԼԻՔՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՆԱԶԱՐՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՆԻԿՈՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ	----------	----------	----------
Վ. ՍԱՀԱԿՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Զ. ՍԱՐԳՍՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՎԱՐՈՍՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի հունիսի 08
Քաղաք Մարալիկ